ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2016 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2017 թ.

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2017 թվականի հունվարի 9-ի թիվ 02/11.5/66-17 հանձնարարականի՝ ներկայացվում է 2016 թվականի ընթացքում կատարված հիմնական աշխատանքների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը:

1. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1.1.Օրենսդրական բարեփոխումներ

1.1.1 «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծեր:

1.1.2 «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծ, որով նախատեսվում է պետական բյուջեից համայնքներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների բաշխման նոր մեխանիզմ, առավելապես բնակչության թվից կախված բաշխումից անցում է կատարվում բազմագործոն բաշխման, լրացուցիչ հաշվի առնելով համայնքների տրանսպորտային հասանելիությունը (մարզկենտրոն, Երևան), բարձրադիրությունը, համայնքում ընդգրկված բնակավայրերի քանակը, բնակչության տարիքային կազմը, մասշտաբի էֆեկտը:

1.1.3 «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ: Այն անդրադառնում է ինչպես Հայաստանի Հանրապետության 2015թ. Սահմանադրությունից բխող փոփոխություններին և լրացումներին, այնպես էլ առավել լայն մասշտաբով օրենսդրական կարգավորումների փոփոխություններին և լրացումներին, որոնք պայմանավորված են Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայով, Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրությամբ, ինչպես նաև միջազգային լավագույն փորձով:

1.1.4 «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք, որի նպատակն է հստակորեն սահմանել և տարանջատել «տեղական տուրքեր» և «տեղական վճարներ» հասկացությունները, վեր հանել տեղական տուրքերի և վճարների հետ կապված ՀՀ օրենսդրությունում առկա թերությունները և բացերը, միատեսակ մոտեցում ցուցաբերել տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրանց դրույքաչափերը սահմանելիս և հստակեցնել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններն այդ հարցում:

1.1.5 «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքի նախագիծ: Օրենքի նախագիծը սահմանում է միջհամայնքային միավորման հասկացությունը, մարմինները, գործունեության կարգը, լիազորությունները և դրանց իրավական, տնտեսական, ֆինանսական հիմքերն ու երաշխիքները: Նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

1.1.6 «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ: Նախագծով նախատեսվող փոփոխությունների և լրացումների ընդունման արդյունքում կապահովվի ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մի շարք իրավակարգավորող փոփոխությունների կատարումն ու «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանեցումը: Նախագիծը քննարկվել է ՀՀ կառավարության դեկտեմբերի 22- ի նիստում:

1.1.7 «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք: Օրենքի ընդունման արդյունքում ապահովվել է «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններին բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից տվյալներ տրամադրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման կիրարկման իրավաչափությունը:

1.1.8 «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, համաձայն որի օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող երեխայի խնամակալների կամ հոգաբարձուների կողմից ապաստանի դիմումը ներկայացվում է սույն հոդվածով սահմանված կարգով, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող երեխայի խնամակալ կամ հոգաբարձու նշանակելու ընթացակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Օրենքը ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է 2016 թվականի հոկտեմբերի 19-ին:

1.1.9 «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային փաստաթուղթ հասկացությունը (էլեկտրոնային ձևով ներկայացված տեղեկություն կամ հաղորդագրություն) ամբողջությամբ չի նկարագրել էլեկտրոնային փաստաթղթի էությունը, միաժամանակ պակասեցվել է արխիվային փաստաթղթերի ժամանակավոր պահպանության ժամկետը մինչև մշտական պահպանության հանձնելը, վերացվել են գործող օրենքի տեխնիկական թերությունները:

1.2. Համայնքների զարգացման ծրագրեր և բյուջեներ

1.2.1 Կատարելագործվել է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանությունը, այդ մեթոդաբանությունը ներկայացնելու նպատակով՝ իրականացվել են աշխատանքային այցեր ՀՀ բոլոր մարզեր: Ակնկալվում է ունենալ առավելիրատեսական, համայնքի զարգացմանն ուղղված միջոցառումներ և համայնքում տնտեսական ակտիվությանը, բիզնեսին աջակցող ծրագրեր: 2017 թվականի հունվարի 10-ի դրությամբ մոտ 625 համայնքների ավագանիներ հաստատել են համայնքների հնգամյա զարգացման ծրագրերը:

1.2.2 Մշակվել է համայնքների բյուջեների կազմման մեթոդաբանությունը, այն պետք է միտված լինի եկամուտների աճի, ծախսային հոդվածների նպատակայնության բարձրացման ու ունիֆիկացիայի, ինչպես նաև տնտեսական ակտիվության խրախուսմանը: Չնայած հաշվարկային սեփական եկամուտների ծավալների նվազեցմանը տարվա ընթացքում (Երևանի, Սյունիքի, Վայոց ձորի և այլ մարզերի համայնքների մասով), այնուամենայնիվ հավաքագրվել է փաստացի 34,446,2 մլն դրամ (կատարողականը՝ 98.4%), ինչը 2015 թվականի համեմատությամբ ավել է 2.4 %-ով կամ 795.7 մլն դրամով:

Համայնքների ղեկավարների, ավագանիների հետ մարզային այցելությունների ժամանակ տեղի ունեցած քննարկումներում, բյուջեների վերլուծության արդյունքներով վերջիններիս առաջարկվել է վերանայել բյուջեների եկամտային մասերը՝ լրացուցիչ եկամուտներ հատկորոշելու, եկամտային մասը առանձին համայնքների դեպքում մինչև 20%-ով ավելացնելու ուղղությամբ:

1.2.3 Մշակվել են համայնքների կողմից մատուցվող ծառայությունները մասնավոր ընկերություններին պատվիրակելու մեթոդական առաջարկություններ:

1.2.4 Խոշորացված համայնքների 18 փնջերում, Մեղրիից մինչև Նոյեմբերյան, ներդրումային ծրագրեր իրականացնելու համար ԱՄՆ ՄԶԳ և ՇԶԳ դրամաշնորհային միջոցներով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից 2016 թվականին սկսվել է «Տեղական ինքնակառավարման բարոփոխումների ծրագրի» իրագործումը, որը կշարունակվի մինչև 2020 թվականը:

Այս նպատակով ԱՄՆ կառավարության կողմից Հայաստանին է շնորհվել 8,5 մլն և Շվեյցարական կառավարության կողմից 2,4 մլն դոլար դրամաշնորհ:

1.3. Էլեկտրոնային կառավարում

1.3.1 Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ(ՀԿՏՀ): 559 համայնքապետարաններում շահագործվող Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ), որպես ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից ներկայացված նախաձեռնություն, հաղթող ճանաչվեց 2016թ.-ի նոյեմբերին Թբիլիսիում կայացած՝ Վրաստանի Կիբերանվտանգության և ՏՀՏ նորարարության 9-րդ տարածաշրջանային համաժողովի (GITI) շրջանակներում անցկացված մրցանակաբաշխության ժամանակ՝ «Լավագույն տարածաշրջանային համայնքային էլ. ծառայություն» անվանակարգում:

1.3.2 Համայնքապետարանների համացանցային կայքեր են գործարկվել թվով 138 համայնքապետարաններում: Ներկա դրությամբ կայքեր ունեցող համայնքապետարանների ընդհանուր թիվը 203 է:

1.3.3 Քաղաքացիների սպասարկման գրասենյակներ (ՔՍԳ) են բացվել թվով 7 համայնքապետարաններում: ՔՍԳ-ների ընդհանուր թիվը հանրապետությունում 21 է, որոնցից 8-ը՝ խոշորացված համայնքների կենտրոններում:

1.3.4 Ներդրվել է համայնքային նշանակության հանրային միջոցառումների առցանց հեռարձակում: Այս ուղղությամբ 2016թ.-ին իրականացված աշխատանքների արդյունքում ՀՀ թվով 28 համայնքներ ապահովվել են համայնքային նշանակության միջոցառումները (ավագանու նիստեր, ՏԻՄ-երի ասուլիսներ, հանրային քննարկումներ) առցանց հեռարձակելու հնարավորությամբ:

1.4. «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնության ազգային համակարգողի դերի ստանձնում

2016 թվականին Եվրոպական Հանձնաժողովի էներգետիկայի գլխավոր տնօրինության և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միջև կնքվել է գործընկերության համաձայնագիր, որի համաձայն՝ Եվրոպական Հանձնաժողովի էներգետիկայի գլխավոր տնօրինությունը ճանաչում է նախարարությանը որպես Դաշնագրի հիմնական դերակատար՝ ՀՀ-ում տեղական իշխանությունների համար Դաշնագրի ազգային համակարգող:

2016 թվականի հոկտեմբերի 26-ին կայացել է Հայաստանում տեղական ինքնակառավարման ներդրման 20-ամյակին նվիրված «Կայուն զարգացման խթանումը Արևելյան գործընկերության երկրներում» բարձրաստիճան միջազգային համաժողովը: Համաժողովը կազմակերպվել է Եվրոպական հանձնաժողովի, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, ԵՄ Արևելյան գործընկերության տեղական և տարածքային իշխանությունների հանձնաժողովի (CORLEAP) և «Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելք» (CoM East) նախաձեռնության համատեղ ուժերով: Համաժողովի ընթացքում, մասնավորապես, Եվրոպական հանձնաժողովը հայտարարել է Արևելյան գործընկերության երկրների «Քաղաքապետերի դաշնագիր» ծրագրի երկրորդ փուլի և «Քաղաքապետերը հանուն տնտեսական զարգացման» նոր նախաձեռնության (M4EG) մասին՝ ուղղված համապասխանաբար էներգետիկ արդյունավետությանը և գործարար ոլորտին: Համաժողովին մասնակցել է Արևելյան գործընկերության և Դաշնագիրը ստորագրած երկրների (թվով 15) մոտ 320 մասնակիցներ: Դաշնագրին միացել են ՀՀ թվով 15 համայնքներ, որից 4-ը՝ վերոնշյալ միջոցառման շրջանակներում:

1.5. Հայաստանում տեղական ժողովրդավարության ճանապարհային քարտեզի ստորագրում

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության և Եվրոպայի Խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի միջև 2016 թվականի հունիսի 9-ին ստորագրվել է Հայաստանում տեղական ժողովրդավարության ճանապարհային քարտեզը: Ճանապարհային քարտեզի ստորագրմամբ կողմերը ստանձնեցին Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիայի իրականացման մոնիթորինգի շրջանակներում փոխգործակցությունը և քաղաքական երկխոսությունը շարունակելու հանձնառությունը: Կողմերը պարտավորվեցին նաև համատեղ աշխատանքով կյանքի կոչել ճանապարհային քարտեզը՝ Հայաստանում տեղական ժողովրդավարության մասին թիվ 351 (2014թ.) խորհրդատվությունն իրագործելու նպատակով:

2. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2.1. Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են համայնքների վերաբերյալ տեղեկատվական բազայի վարման, ցուցանիշների կազմի ու բովանդակության կատարելագործման աշխատանքները: Տվյալների բազայի վարման պարզ համակարգի փոխարեն նախատեսվում է ստեղծել բազայի կառավարման բազմամակարդակ (համայնք, մարզ, ազգային մակարդակ) ավտոմատացված համակարգ, որը թույլ կտա ապահովել տվյալների համապատասխանությունը բոլոր մակարդակներում և ռեալ ժամանակի ռեժիմում:

2.2. Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարության ընդունումից հետո Նախարարության կողմից մշակվել է ՀՀ մարզերի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության մշակման մեթոդաբանությունը, որին համապատասխան իրականացվել են անհրաժեշտ աշխատանքները: Մարզպետարանների՝ ծրագրերով զբաղվող ստորաբաժանումների շուրջ 40 աշխատակիցներ մասնակցել են Արագածում, Աղվերանում, Ջերմուկում միջազգային փորձագետների մասնակցությամբ անցկացված ուսուցողական գործնական պարապմունքներին: ՀՀ մարզերի 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունը նախատեսվում է ներկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը 2017 թվականի փետրվարի 3-րդ տասնօրյակում:

Քննարկումներ են ընթանում ԵՄ համապատասխան կառույցների հետ տարածքային զարգացման նպատակով բյուջետային աջակցություն ստանալու վերաբերյալ, «տարածքային ու գյուղական զարգացում» առաջնայնությունը ՀՀ կառավարության կողմից ընդգրկվել է առաջնահերթ ուղղությունների ցանկում և ներկայացվել է ԵՄ երևանյան գրասենյակ:

2.3. Տարածքային զարգացման ռազմավարության իրագործման շրջանակում ԵՄ-ի հետ համագործակցության արդյունքում մեկնարկել են 7 պիլոտային տարածաշրջանային զարգացման դրամաշնորհային ծրագրեր՝ շուրջ 10 մլն եվրո ընդհանուր արժեքով:

Պիլոտային տարածաշրջանային զարգացման դրամաշնորհային ծրագրերը կշարունակվեն մինչև 2018 թվականը: Ծրագրերի իրականացման սկզբնական մակարդակում ակնկալվում է, որ շուրջ 2200 մարդ կստանա աջակցություն՝ զբաղվածության աճի համար, դասընթաց, խորհրդատվություն և այլն: Ավելի քան 700 ձեռնարկություններ կստանան աջակցություն մրցակցությունը բարելավելու համար: Ծրագրերի իրականացման վերջնական արդյունքում ակնկալվում է, որ ծրագրերի կողմից մարզերում կստեղծվեն շուրջ 500 աշխատատեղ, ավելի քան 320 ձեռնարկություններ կբարձրացնեն իրենց մրցունակությունը (տարեկան շրջանառության աճ), ինչպես նաև ծրագրերի կառավարման գործում պետական կառավարման մարմինների կարողությունների զարգացում:

Ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

1.

Ծրագրի վերնագիր	**Ինտեգրված աջակցություն Հայաստանի գյուղական լեռնային շրջանների կայուն տնտեսական զարգացմանը**	
Գլխավոր դիմորդ	**“ՇԵՆ” ՀԿ**	
Թիրախային մարզ	Սյունիքի,Գեղարքունիքի մարզեր	
Թիրախային ոլորտ	Գյուղատնտեսություն, սննդի վերամշակում, էներգետիկա	
Ծրագրի բյուջե	**Ընդհանուր**	**1,340,995 ԵՎՐՈ**
	ԵՄ դրամաշնորհ	900,000 ԵՎՐՈ
	Ազգային համաֆինանսավորում	225,000 ԵՎՐՈ
	Շահառուի սեփական համաֆինանսավորում	215,995 ԵՎՐՈ
Հիմնական արդյունքներ	Առնվազն 2 տարի կայունություն ունեցող ուղղակիորեն ստեղծված աշխատատեղերի թիվ	**97**
	Որից որակյալ աշխատատեղերի թիվ՝	23
	Բարձրացված մրցունակությամբ ձեռնարկությունների թիվ	**6**
Ծրագրի ընդհանուր նկարագիր	Ծրագիրը կնպաստի գյուղական վայրերի տեղական տնտեսական աճին՝ ստեղծելով կոոպերատիվներ, առաջնային արտադրության եւ վերամշակման համար ենթակառուցվածքներ, կայուն աշխատատեղեր, և տարածաշրջանային մրցունակության աճ երկու համայնքային կլաստերներներում (մեկ կլաստեր Սյունիքի մարզում և մեկ կլաստեր Գեղարքունիքի մարզում):	

2.

Ծրագրի վերանգիր	**Շիրակի մարզում տեխնոլոգիական զարգացման խթանում**	
Գլխավոր դիմորդ	**Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոն Հայաստան հիմնադրամ**	
Թիրախային մարզ	Շիրակի մարզ	
Թիրախային ոլորտ	ՏՏ զարգացում	
Ծրագրի բյուջե	**Ընդհանուր՝**	**750,000 ԵՎՐՈ**
	ԵՄ դրամաշնորհ	510,000 ԵՎՐՈ
	Ազգային համաֆինանսավորում	127,500 ԵՎՐՈ
	Շահառուի սեփական համաֆինանսավորում	112,500 ԵՎՐՈ
Հիմնական արդյունքներ	Առնվազն 2 տարի կայունություն ունեցող ուղղակիորեն ստեղծված աշխատատեղերի թիվ	**90**

	Որից որակյալ աշխատատեղերի թիվ՝	35
	Բարձրացված մրցունակությամբ ձեռնարկությունների թիվ	**17**
Ծրագրի ընդհանուր նկարագիր	Ծրագրի նպատակն է՝ (1) ստեղծել զբաղվածության հնարավորություններ երիտասարդ գործազուրկ բնակչության կարողությունների զարգացման միջոցով, (2) ընդլայնել մարզում առկա ՏՏ ընկերությունների գործունեությունը ընկերությունների վերապատրաստման միջոցով, և ավելի լավ դիրքավորել տեղական և միջազգային շուկաներում և ստեղծել նոր ՏՏ ընկերություններ:	

3.

Ծրագրի վերանգիր	**Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը, որպես հիմնական նախապայման տեղական / տարածաշրջանային տնտեսական զարգացման համար**	
Գլխավոր դիմորդ	**«Հայաստանիփոքրևմիջինձեռնարկատիրությանզարգացմանազգայինկենտրոն »**	
Թիրախային մարզ	Լոռի, Սյունիք, Արմավիր	
Թիրախային ոլորտ	Սննդի վերամշակում և տուրիզմ	
Ծրագրի բյուջե	**Ընդհանուր՝**	**1.604.808 ԵՎՐՈ**
	ԵՄ դրամաշնորհ	1.123.370 **ԵՎՐՈ**
	Ազգային համաֆինանսավորում	280.842.50 **ԵՎՐՈ**
	Շահառուի սեփական համաֆինանսավորում	195.795.50 **ԵՎՐՈ**
Հիմնական արդյունքներ	Առնվազն 2 տարի կայունություն ունեցող ուղղակիորեն ստեղծված աշխատատեղերի թիվ	**60**
	Որից որակյալ աշխատատեղերի թիվ՝	12
	Բարձրացված մրցունակությամբ ձեռնարկությունների թիվ	**100**
Ծրագրի ընդհանուր նկարագիր	Ծրագրի նպատակն է խթանել մրցունակությունը ՓՄՁ-ների, դիվերսիֆիկացնել տարածաշրջանային տնտեսությունները և ստեղծել կայուն զբաղվածության հնարավորություններ երիտասարդ չափահասների համար Լոռու, Սյունիքի և Արմավիրի մարզերում, սննդի վերամշակման, զբոսաշրջության ոլորտներում:	

4.

Ծրագրի վերնագիր	**Բնապահպանական մարտահրավերների վերածումը հնարավորությունների. Պլաստիկ թափոններից շինարարականնյութերի ստացում**	
Գլխավոր դիմորդ	**Կապանի քաղաքապետարան**	
Թիրախային մարզ	Սյունիք, Վայոց Ձոր	
Թիրախային ոլորտ	Բնապահպանություն	
Ծրագրիբյուջե	**Ընդհանուր՝**	**749,963.55 Եվրո**
	ԵՄ դրամաշնորհ՝	509,978.07 Եվրո
	Ազգային համաֆինանսավորում՝	127,494.52 Եվրո
	Շահառուհի սեփական համաֆինանսավորում՝	112,490.96 Եվրո
Հիմնական արդյունքներ	Առնվազն 2 տարի կայունություն ունեցող ուղղակիորեն ստեղծված աշխատատեղերի թիվ	**35**
	Որից որակյալ աշխատատեղերի թիվ՝	6
	Բարձրացված մրցունակությամբ ձեռնարկությունների թիվ՝	**15**
Ծրագրի ընդհանուր	Ծրագրի նպատակն է ստեղծել նոր տնտեսական հնարավորություններ Սյունիքի	

նկարագիր	և Վայոց Ձորի մարզերում՝ պլաստիկ թափոններից շինարարական նյութերի արտադրման նպատակով նորարարական և հասանելի տեխնոլոգիաների ներդրման համար: Այս տեխնոլոգիան կօգնի փոխարինել սովորական արտադրանքներում լայնորեն կիրառվող ավազ-ցեմենտի խառնուրդը ավազ-պլաստիկի խառնուրդի, որը առավել դիմացկուն է և դարձնում է արտադրանքը ավելի կայուն մաշվածության նկատմամբ: Տեխնոլոգիայի շնորհիվ արտադրանքը ավելի մատչելի կդառնա, քանի որ ցեմենտի փոխարեն կօգտագործվի պլաստիկ թափոն:

5.

Ծրագրի վերնագիր	**Դիլիջանի և հարակից համայնքների զարգացման նախաձեռնություն**	
Գլխավոր դիմորդ	**ԻԴԵԱ հիմնադրամ**	
Թիրախային մարզ	Տավուշ	
Թիրախային ոլորտ	ՏՁ բոսաշրջություն	
Ծրագրի բյուջե	**Ընդհանուր՝**	**1,194,890 Եվրո**
	ԵՄ դրամաշնորհ՝	780,000 Եվրո
	Ազգային համաֆինանսավորում՝	195,000 Եվրո
	Շահառուի սեփական համաֆինանսավորում (այդ թվում՝ եկամուտներ գործողության իրականացման ժամանակահատվածում)	219,890 Եվրո
Հիմնական արդյունքներ	Առնվազն 2 տարի կայունություն ունեցող ուղղակիորեն ստեղծված աշխատատեղերի թիվ	**50**
	Որից որակյալ աշխատատեղերի թիվ՝	19
	Բարձրացված մրցունակությամբ ձեռնարկությունների թիվ՝	**100**
Ծրագրի ընդհանուր նկարագիր	Ծրագրի հիմնական նպատակն է Դիլիջանում և հարակից տարածքներում (ներառյալ ազգային պարկը) զբոսաշրջության և հյուրանոցային գործունեության զարգացումը և խթանումը, որը ենթադրում է նոր աշխատատեղերի և բիզնես հնարավորությունների ստեղծում և առաջ խաղացում:	

6.

Ծրագրի վերնագիր	**ՓՄՁ մրցունակության բարձրացում կայուն նորարարական տեխնոլոգիաների առավել լայն կիրառման և խթանման միջոցով**	
Գլխավոր դիմորդ	**Ֆլորենցիայի համալսարանի Իտալական ուսումնահետազոտական կազմակերպություն,** անվանումը՝ PIN S.c.	
Թիրախային մարզ	Վայոց Ձոր	
Թիրախային ոլորտ	Վերականգնվող էներգիա, զբոսաշրջության	
Ծրագրի բյուջե	**Ընդհանուր՝**	**2,084,951.71 Եվրո**
	ԵՄ դրամաշնորհ՝	1,500,000 Եվրո
	Ազգային համաֆինանսավորում՝	375,000 Եվրո
	Շահառուի սեփական համաֆինանսավորում (այդ թվում՝ եկամուտներ գործողության իրականացման ժամանակահատվածում)	209,951.71 Եվրո
Հիմնականարդյունքներ	Առնվազն 2 տարի կայունություն ունեցող ուղղակիորեն ստեղծված աշխատատեղերի թիվ	**32**
	Որից որակյալ աշխատատեղերի թիվ՝	7
	Բարձրացված մրցունակությամբ ձեռնարկությունների թիվ՝	**84**

Ծրագրի ընդհանուր նկարագիր	Ծրագիրը կաջակցի ՓՄՁ-ներին ներկայացնել արևային էներգիայի տեխնոլոգիաները էներգախնայողության մեթոդների հետ միասին; կառուցել փոքրնական արևային էներգիայի էլեկտրական; բարձրացնել հանրային իրազեկության մակարդակը կայուն էներգիայի պրակտիկայի վերաբերյալ և տարածաշրջանում ամրապնդել ինստիտուցիոնալ և մարդկային կարողությունները՝ անհրաժեշտ մշակելու և իրականացնելու համար էներգաարդյունավետ և խնայողական միջոցառումներ:

7.

Ծրագրի վերնագիր	**Տավուշի մարզի ինտեգրված և համաչափ տնտեսական զարգացում**	
Գլխավոր դիմորդ	**“ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ” տարածքային համագործակցության ՀԿ-ի**	
Թիրախային մարզ	Տավուշ	
Թիրախային ոլորտ	Սննդի վերամշակում	
Ծրագրի բյուջե	**Ընդհանուր՝**	**1,626,333.33 Եվրո**
	ԵՄ դրամաշնորհ՝	975,800 Եվրո
	Ազգային համաֆինանսավորում՝	243,950 Եվրո
	Շահառուի սեփական համաֆինանսավորում (այդ թվում՝ եկամուտներ գործողության իրականացման ժամանակահատվածում)	406,583. 33 Եվրո
Հիմնական արդյունքներ	Առնվազն 2 տարի կայունություն ունեցող ուղղակիորեն ստեղծված աշխատատեղերի թիվ	**120**
	Որից որակյալ աշխատատեղերի թիվ՝	4
	Բարձրացված մրցունակությամբ ձեռնարկությունների թիվ՝	**90**
Ծրագրի ընդհանուր նկարագիր	Ծրագրի նպատակն է Տավուշի մարզում նվազեցնել աղքատությունը և աջակցել ինտեգրված և հավասարաչափ տնտեսական զարգացմանը՝ գյուղական կոոպերատիվների և ՓՄՁ-ների մրցունակության բարձրացման (այդ թվում՝ հնարավորություն ներներդրումների և առևտրի համար) և նոր աշխատատեղերի և տնտեսական հնարավորությունների ստեղծման միջոցով:	

2.4 Միավորվող համայնքներում աջակցող ծրագրեր իրականացնելու նպատակով ԵՄ կողմից նախաձեռնվել և իրականացվում է «Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման մարմինների զարգացում (աջակցություն համախմբված կլաստերներին)» ծրագիրը (2.122.265 եվրո), որի մեջ ընգրկված են հետևյալները.

1.Հաջորդ կանգառը՝ Եվրոպա! – Շարժի պլանավորում և կայուն ռազմավարություններ՝ Դիլիջան համայնքի կլաստերի հանրային տրանսպորտի արդյունավետության բարելավման համար

Նպատակ (ներ)՝ Ծրագրի գլխավոր նպատակն է ստեղծել պատշաճ և արդյունավետ գործող միջհամայնքային ծառայություն մատուցող ընկերություն (ներառյալ միկրոավտոբուսների գնում) Դիլիջան համայնքի տարածքներում շարժի ծառայության համար: Դիլիջանի կլաստեր համայնքը այս նոր կառույցը որպես գյուղական տրանսպորտային սպասարկում կներառի կամ կընդգրկի իր նոր հիմնված կառույցի մեջ, որը կդառնա տրանսպորտային ծառայության մատուցող 15.000 բնակիչների համար ընդլայնված Դիլիջան համայնքի կլաստերի 7 թիրախային գյուղական բնակավայրերում:

Բյուջե՝ 500,000 Եվրո (լրացուցիչ համաֆինանսավորում՝ 50,000 Եվրո)
Տևողություն՝ 18ամիս (մինչև 31/08/2017)

Իրականացնողներ՝ Դիլիջանի քաղաքապետարանը Սիսպելի (իտալական ՀԿ) հետ համատեղ, Հաղարծինի, Գոշի, Հովքի, Թեղուտի, Աղավնավանքի, Խաչարձանի գյուղապետարաններ:

2. Մաքուր այլանս՝ հասանելի ծառայություններ Գորիսի և Սառնակունքի համայնքների կլաստերների համար

Նպատակ (ներ)՝ Զարգացնել կամ վերանայել թափոնների կառավարման վերաբերյալ համապատասխան ռազմավարական փաստաթղթերը համայնքների խոշորացման լույսի ներքո և ներդնել թափոնների կառավարման բարելավված ծառայություն: Բարձրացնել թափոնների կառավարման առկա կազմակերպության (Գորիսի կլաստեր) կարողությունները և հիմնել թափոնների կառավարման նոր կազմակերպություն Սառնակունք կլաստերի համար: Ապահովել այս կազմակերպություններին նվազագույն մեքենաներով /սարքավորումներով ծառայությունների արդյունավետ մատուցման համար: Անցկացնել հանրային իրազեկման և տեսանելիության գործունեություն:

Բյուջե՝ 496,174 Եվրո (լրացուցիչ համաֆինանսավորում՝ 86,121 Եվրո)
Տևողություն՝ 36 ամիս (մինչև 31/12/2020)
Իրականացնողներ՝ Սյունիքի համայնքը Ուրբան հիմնադրամի հետ համատեղ, Գորայքի, Ծեղուկի, Սառնակունքի, Սպանդարյանի, Քարահունջի, Վերիշենի, Ակների գյուղապետարաններ և Գորիսի քաղաքապետարան:

3. Ամփոփված ջանքեր, բազմապատկված արդյունքներ

Նպատակ (ներ)՝ Նպաստել ենթակառուցվածքների (գյուղատնտեսական և տրանսպորտային) զարգացմանը, ինչպես նաև Վայոց Ձորի մարզի Վայքի կլաստերի 5 համայնքների թիրախային խմբերի կարողությունների զարգացմանը; Նպաստել Վայքի կլաստերի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակի և քանակի բարձրացմանը ակտիվ քաղաքացիական խմբերի ներգրավվման և միջհամայնքային համագործակցության ամրապնդման միջոցով:

Բյուջե՝ 384,000Եվրո (լրացուցիչ համաֆինանսավորում՝ 42,700 Եվրո)
Տևողություն՝ 30 ամիս (մինչև 30/09/2019)
Իրականացնողներ՝ Աշխատանք և հայրենիք ՀԿ, Վայքի քաղաքապետարան, Ազատեկի, Փորի, Արինի, Զեդեայի գյուղապետարաններ:

4. Ուրցաձոր համայնքի կլաստերում աղքատության նվազեցում՝ ինքնազբաղվածության հնարավորությունների զարգացման միջոցով

Նպատակ(ներ): 3 - ից 6 ամիս վերապատրաստման դասընթացների արդյունքում թիրախային խմբերի 100 ներկայացուցիչներ հստակ պատկերացում կկազմեն ռեսուրսների կայուն կառավարման, էկո և ագրո զբոսաշրջության հիմնարար սկզբունքների վերաբերյալ, ձեռք կբերեն անգլերենի և համակարգչային հիմնական գիտելիքներ: Համայնքային կլաստերի առնվազն 80 տնային տնտեսություններում ստեղծված են եկմուտի և զբաղվածության հնարավորություններ՝ ուղղված միայնակ կանանց, ովքեր վարում են տնտեսություն, գործազուրկ երիտասարդներին և փախստականներին: Բիզնես համագործակցություններ և համագործակցության նոր բազմամակարդակ հարթակներ են ձևավորված համագործակից համայնքների միջև, որի արդյունքում իրականացվել են առնվազն 15 համատեղ մշակված ծրագրեր:

Բյուջե՝ 500,000Եվրո (լրացուցիչ համաֆինանսավորում՝ 63,270 Եվրո)
Տևողություն՝ 24 ամիս (մինչև 31/01/2018)

Իրականացնողներ՝ Աշխատանք և հայրենիք ՀԿ, Վայքի քաղաքապետարան, Ազատեկի, Փորի, Արենիի, Զեդեայի գյուղապետարաններ:

2.5. Ինտեգրված աջակցություն գյուղական համայնքների զարգացմանը. Ծրագիրը իրականացվում է Տավուշի մարզի սահմանամերձ համայնքներում, նպատակը արտադրական կարողությունների միավորման ճանապարհով աշխատատեղերի և բարվոք կենսապայմանների ստեղծումն է բնակչության կարիքավոր խմբերի համար:

Ծրագրի տևողությունը՝ 2015-2020
Ծրագրի բյուջեն՝ 5,024,988.70 ԱՄՆ դոլար
Դոնոր՝ Ռուսաստանի Դաշնության կառավարություն
Իրականացնող ազգային գործընկեր՝ ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Ծրագրում ընդգրկված համայնքների ցանկ

Աչաջուր	Բագրատաշեն	Դիտավան	Նավուր	Վարագավան
Աճարկուտ	Բարեկամավան	Դովեղ	Ներքին Կարմիրաղբյուր	Վազաշեն
Ակնաղբյուր	Բերդավան	Ջուջևան	Ներքին Ծաղկավան	Վերին Կարմիրաղբյուր
Արծվաբերդ	Բերքաբեր	Խաշթառակ	Նորաշեն	Վերին Ծաղկավան
Այգեձոր	Չինարի	Կիրանց	Պառավաքար	Ոսկեպար
Այգեհովիտ	Չինչին	Կողբ	Պտղավան	Ոսկեվան
Այգեպար	Չորաթան	Կոթի	Սարիգյուղ	Իծաքար
Ազատամուտ	Դեբեդավան	Լուսահովիտ	Սևքար	Բերդ
Բաղանիս	Դեղձավան	Մոսեսգեղ	Տավուշ (Թովուզ)	Նոյեմբերյան

2016 թվականի արդյունքերը

- Մարզի **20 համայնքերի** համար համայնքային ինտեգրված զարգացման պլաններ են կազմվել և հաստատվել յուրաքանչյուր համայնքի ավագանիների համապատասխան որոշումներով:
- **3 համայնքներում**(Բերդավան, Դովեղ, Ոսկեվան) Ծրագիրը տրամադրել է **12 փոքր ջերմատներ** յուրաքանչյուրը 135 մ^2 մակերեսով:
- **Ոսկեվան** համայնքում ավարտել է **մշակույթի տան մասնակի վերանորոգման /էներգաարդյունավետության բարձրացման** աշխատանքները /27,000 ԱՄՆ դոլար/

Իրականացման ընթացքում գտնվող աշխատանքներ

- **7 համայնքներում** 24 փոքր ջերմատների տրամադրում
- **Կողբ** համայնքում փողոցային ԼԱԴ լուսավորության կառուցում /2կմ/
- **Չինարի** համայնքում 54 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածքում ոռոգման ներքին ցանցի կառուցում
- **Ոսկեպարում** /Նոյեմբերյան համայնք/ անտառային բարիքների հավաքման կետի/սառնարանային տնտեսության հիմնում
- **Տավուշ-Չինչին** փնջում գյուղմեխանիզացիայի պարկի հիմնում
- **Դիտավան** համայնքում 3,5 հա պտղատու այգիների հիմնում

2017 թ-ին նախատեսված աշխատանքներ

- **8 համայնքներում** համար համայնքային ինտեգրված զարգացման պլանների կազմում մասնակցային մեթոդոլոգիայով
- **Բագրատաշենում և Ներքին Ծաղկավանում** գյուղմեխանիզացիայի պարկի ստեղծում
- **Ներքին Ծաղկավանում** հացահատիկային կուլտուրաների հավաքման կետի/ալրաղացի ստեղծում, փոքրամասշտաբ մակարոնի և հացի արտադրամասի ստեղծում
- **20** փոքր ջերմատների տրամադրում
- **30 հա** նոր այգիների հիմնում **Բագրատաշենում**
- **10** փոքրամասշտաբ գյուղվերամշակման արտադրամասերի ստեղծում /չրանոցներ, գինու արտադրամասեր, ինկուբատոր/
- Առնվազն **3 համայնքներում համայնքային ենթակառուցվածքների** վերակառուցում

2.6. Ընթացիկ տարում մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել են մարզերում առկա տարբեր խնդիրների լուծմանն ուղղված շուրջ 30 որոշումներ, մասնավորապես ՀՀ կառավարության որոշումներով հատկացված ֆինանսական միջոցները (շուրջ 1.2 մլրդ դրամ) հիմնականում ուղղվել են հանրակրթական, նախադպրոցական, մշակութային, առողջապահական հաստատությունների, համայնքային կենտրոնների, ճանապարհաշինության, ջրամատակարարման, հակակարկտային կայանների ձեռքբերման, գազիֆիկացման, ոռոգման ցանցերի, բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգմանն ու վերակառուցմանը:

2.7 2016 թվականի ընթացքում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հաստատվել են 55 միկրոծրագրեր, փորձաքննության 1-ին փուլն անցել են 42 միկրոծրագրեր, որոնց մասով համայնքների հետ կնքվել են նախնական համաձայնագրեր՝ 5.94 մլրդ դրամ ընդհանուր գումարով: Հաստատված միկրոծրագրերի մասով համայնքների հետ կնքվել են 55 հիմնական համաձայնագրեր՝ 7.48 մլրդ դրամ ընդհանուր գումարով: Միկրոծրագրերի շինաշխատանքների իրականացման համար մրցութային կարգով ընտրվել են կապալառուներ, և նրանց հետ կնքվել է 50 պայմանագիր՝ շուրջ 5.28 մլրդ դրամ ընդհանուր արժեքով:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շինարարության փուլում գտնվող 37 միկրոծրագրերով կատարված աշխատանքների դիմաց վճարվել է 2.2 մլրդ դրամ, ստեղծելով շուրջ 42 հազար մարդ*օր աշխատատեղ և շինաշխատանքներում ընդգրկվածների համար ապահովելով մոտ 359 մլն դրամ եկամուտ (համարժեք 742 հազար ԱՄՆ դոլարին):

Տարեվերջի դրությամբ շինարարական աշխատանքներն ավարտվել են 18 միկրոծրագրերում, որոնց շրջանակներում շինաշխատանքներում ընդգրկվածների համար ստեղծվել են շուրջ 24 հազար մարդ*օր աշխատատեղ՝ ապահովելով մոտ 205 մլն դրամ եկամուտ (համարժեք 424 հազար ԱՄՆ դոլարին):

Աղյուսակ 10. ՄՆՏԶ-ի ավարտված միկրոծրագրերի ցանկն առ 31.12.2016թ

Տեսակ	N	% ըստ թվի	Միկրոծրագրի արժեքը, դրամ	Պայմանագրի արժեքը, դրամ	% ըստ ծրագրի արժեքի	Շահառու	% ըստ շահառուի թվի
Մանկապարտեզ	7	38.9%	581,850,155	523,199,791	42.1%	14,470	27.6%
Դպրոց	4	22.2%	391,447,658	366,892,086	28.3%	4,959	9.5%
Խմելու ջուր	4	22.2%	231,743,968	209,201,160	16.8%	3,416	6.5%
Պոլիկլինիկա	2	11.1%	100,431,912	90,086,709	7.3%	6,415	12.2%
Համայնքի կենտրոն	1	5.6%	76,410,797	69,033,494	5.5%	23,200	44.2%

Ընդամենը	18	100.0%	1,381,884,489	1,258,413,241	100.0%	52,460	100.0%

2.8. Հաշվետու ժամանակահատվածում «Սահմանամերձ համայնքներին սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով նախատեսված դրույթների կատարումը ապահովելու համար ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով հատկացվել է 928 մլն դրամ, որի շրջանակներում սոցիալական աջակցություն տրամադրվել է սահմանամերձ համայնքների ընտանիքներին՝ բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի սակագնի մասնակի փոխհատուցման ու գույքահարկի և հողի հարկի փոխհատուցման նպատակով:

2.9. Ասիական զարգացման բանկի դրամաշնորհային միջոցներով նախատեսվում է իրականացնել քաղաքային զարգացման ծրագրեր Վանաձորում, Դիլիջանում, Ծաղկաձորում, Ջերմուկում՝ շուրջ 50 մլն դոլար ծավալով: Այս ծրագրերին մասնակցելու հետաքրքրվածություն է ներկայացնում նաև մասնավոր սեկտորը, ինչը հնարավոր կդարձնի մուլտիպլիկատիվ արդյունքի ստացումը շատ ուղղություններում:

2.10. Հաշվետու ժամանակահատվածում նախարարության կողմից կազմակերպվել է զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների դպրոցահասակ 7-13 տարեկան 4500 երեխաների ամառային հանգիստը՝ երեք հերթափոխով, 20-ական օրով: ՀՀ մարզերից, ԼՂՀ-ից և Ջավախքից դպրոցահասակ 7-13 տարեկան երեխաները ամառային հանգիստն անցկացրել են ՀՀ Կոտայքի մարզի ճամբարներում:

2.11. Վերլուծվել է ՀՀ Շիրակի մարզի առողջապահական համակարգի օպտիմալացման հարցը: Առողջապահական համակարգի վերլուծության արդյուքում մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Սամարիթեր վերականգնողական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին միավորելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

3. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակահատվածում տարածքային ներդրումային ծրագրերի իրականացման մասով կատարվել են հետևյալ աշխատանքները

3.1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2016 թվականի ապրիլի 5-ին ստորագրված միջազգային համաձայնագրի համաձայն՝ իրականացման փուլում գտնվող «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրի» շրջանակներում համակարգվել է Ծրագրի երկու միջազգային խորհրդատվական կազմակերպությունների կողմից իրականացվող աղբավայրի տեղանքի երկրաբանական հետազոտությունների, կառուցվող աղբավայրերի 3 բջիջների նախագծերի մշակման աշխատանքները, ինչպես նաև ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի 12 քաղաքային համայնքների ավագանիների որոշումներով ստեղծված ԿԿԹԿ և նոր կառուցվող աղբավայրի շահագործման «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն ստեղծման և կայացման աշխատանքները:

2016 թվականի դեկտեմբերի 16-ին նախարարության կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպվել են ծրագրի նախնական գնահատման հայտի հանրային առաջին լսումները, ինչպես նաև հայտ է ներկայացվել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ պետական բնապահպանական փորձաքննություն նշանակելու նպատակով:

3.2. 2016 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ վարչապետի մարզային այցելությունների ընթացքում տրված հանձնարարականի կատարման արդյունքում իրականացվել են ՀՀ մարզերի կողմից ներկայացված ծրագրերի հավաքագրման, ամփոփման և իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության հստակեցման աշխատանքները, ինչպես նաև կազմակերպվել է նշված ծրագրերի քննարկումները շահագրգիռ մարմինների և կառույցների հետ: Արդյունքում 14 ծրագրեր ներկայացվել են համապատասխան մարմինների քննարկմանը՝ հետագա հնարավոր ընթացքն ապահովելու նպատակով:

3.3. Ակտիվ բանակցություններ են վարվել ՀՀ կառավարության և Գերմանական զարգացման բանկի (KfW) հետ հակագործակցության շրջանակներում ՀՀ Լոռու մարզի և Դիլիջան քաղաքի աղբահանության զարգացման և աղբավայրի կառուցման ծրագրի իրականացման շուրջ: 2016 թվականի նոյեմբերի 4-ին ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի մոտ կայացած ծրագրի ղեկավար անձնակազմի,

փորձագետների և բանկի ներկայացուցչի հետ քննարկումների արդյունքներով որոշվել է ծրագրում ընդգրկել նաև ՀՀ Տավուշի մարզը ամբողջությամբ: Քննարկվել է նաև Գերմանական կառավարության կողմից 2,0 մլն. եվրո դրամաշնորհի տրամադրման, ինչպես նաև խորհրդատվական աշխատանքների ընդլայման հարցերը:

3.4. Իր իրավասությունների շրջանակներում նախարարությունն աջակցել է ՀՀ կառավարության և Ասիական զարգացման բանկի հետ համագործակցության շրջանակներում իրականացվող «Հայաստանում կոշտ կենցաղային թափոնների կառավարման բարելավման» և «Հայաստանի հեռավոր և փոքր համայնքներում կոշտ կենցաղային թափոնների կառավարման լուծումներ» դրամաշնորհային ծրագրերի իրականացման աշխատանքներին և ընթացքին:

3.5. Ի կատարումն ՀՀ վարչապետի 2016 թվականի հունիսի 30-ի թիվ 582-Ա որոշմամբ ձևավորված միջգերատեսչական հանձնաժողովի 2016 թվականի հոկտեմբերի 21-ի նիստի արձանագրության 1-ին կետի 1.1-ին ենթակետի հանձնարարականի՝ մշակվել և նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 01/18.2/5818-16 գրությամբ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N 797-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որի ընդունմամբ ակնկալվում է Ասիական զարգացման բանկի կողմից իրականացվող ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրում ներառված առավել վտանգավոր 377 դպրոցների փոխարեն ընդգրկել սեյսմիկ անվտանգության առումով առավել խոցելի և կրթական գործընթացի համար անհրաժեշտ քաղաքաշինական բարելավման անհրաժեշտությամբ թվով 425 դպրոց:

3.6. Իրականացվել է Արևելյան գործընկերության Հայաստան-Վրաստան տարածաշրջանային համագործակցության ծրագրերի մշտադիտարկում:

3.7. Կատարվել է ՀՀ Սևան, Աշտարակ, Եղեգնաձոր, Ստեփանավան զարգացման ռազմավարական ուղիների նախանշում՝ նշյալ քաղաքների առկա վիճակի ախտորոշման հիման վրա: (Նշյալ քաղաքների ախտորոշման համար հարցաթերթիկների պատրաստում, հարցման անցկացում, շփում նշյալ քաղաքների գործընկերների հետ, համեմատական (SWOT) վերլուծության իրականացում՝ քաղաքների ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների բացահայտում, անցկացված վերլուծության հիման վրա քաղաքների ռազմավարական զարգացման ուղիների նախանշում):

3.8. Կատարվել են Հայ-ռուսական 5-րդ միջռեգիոնալ համաժողով, «EXPO Russia-Armenia plus Iran» 7-րդ ցուցահանդես իրականացման աշխատանքներ:

4. ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

4.1. 2016 թվականին իրականացվել է իրավական և մասնագիտական հսկողություն 303 համայնքներում: Նախարարության կողմից հսկողություն է սահմանվել արձանագրված խախտումների վերացման ուղղությամբ մարզպետների կողմից իրականացված աշխատանքների նկատմամբ: Արձանագրված խախտումները հիմնականում վերաբերվել են «Տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Քաղաքաշինության մասին» և այլ օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի պահանջների չկատարմանը:

4.2. կադրային գործի վարման նկատմամբ վերահսկողություն է իրականացվել թվով 52 համայնքապետարանների աշխատակազմերում:

4.3. նախարարության կողմից վարվում է համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների միասնական գրանցամատյան: 2016թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ համայնքային ծառայության պաշտոնները 6499-ն են:

4.4. վերապատրաստվել են թվով 495 համայնքային ծառայող և նրանց տրվել են ավարտական փաստաթղթեր՝ վկայականներ:

5. ՄԻՋՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

<u>5.1. Հայ-ռուսական միջտարածաշրջանային համագործակցության հարցերով համատեղ աշխատանքային խմբիչ որրորդ նիստի անցկացում</u>

2016 թվականի ապրիլի 19-ին Ռուսաստանի Դաշնության Դոնի Ռոստով քաղաքում ՀՀ տարածքային կառավարմանևզարգացման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանի և ՌԴ տնտեսական զարգացման նախարարի տեղակա լԱլեքսանդր Ցիբուլսկու համանախագահությամբ տեղի է ունեցել հայ-ռուսական միջտարածաշրջանային համագործակցության հարցերով աշխատանքային խմբի չորրորդ նիստը:

Նիստի ընթացքում քննարկվել են միջտարածաշրջանային համագործակցության զարգացման հեռանկարներին ուուղղություններին, իրավապայմանագրային բազայի զարգացմանն ու հումանիտար ոլորտում գործակցությանը, ինչպես նաև տարբեր ոլորտներում կոնկրետ ծրագրերի իրագործման հնարավորություններին վերաբերող հարցեր: Գործընկեր տարածաշրջանների պատվիրակները ներկայացրել են համագործակցության ընթացիկ վիճակը և գործակցության ընդլայնման հնարավորությունները:

<u>5.2. Հայ-ռուսական միջտարածաշրջանային հինգերորդ համաժողովի կայացում</u>

2016 թվականի հոկտեմբերի 13-15-ը Երևանում տեղի ունեցավ Հայ-ռուսական միջտարածաշրջանային հինգերորդհամաժողովը, որի նպատակն էր քննարկել տարբեր ոլորտներում համագործակցության խորացմանն ու զարգացմանը վերաբերող հարցեր, նպաստել ՀՀ մարզերի և ՌԴ տարածաշրջանների միջև համագործակցության ներուժի բացահայտմանը և նոր կապերի հաստատմանը:

Համաժողովի շրջանակներում ստորագրվեցին հայ-ռուսական փոխգործակցությանն առնչվող փաստաթղթեր: Մասնավորապես, ՀՀ կառավարության և ՌԴ Ռոստովի նահանգի միջև ստորագրվեց առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային ոլորտներում համագործակցության համաձայնագիր, ՀՀ Գեղարքունիքի մարզի և ՌԴ Օմսկի նահանգի կառավարության միջև ստորագրվեց առևտրատնտեսական, գիտատեխնիկական և սոցիալական ոլորտներում համագործակցության համաձայնագիր, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Արթիկի և ՌԴ Ռոստովի մարզի Կրասնոսուլինսկ համայնքի միջև ստորագրվեց եղբայրական կապերի հաստատման վերաբերյալ համաձայնագիր:

Հինգերորդհամաժողովի շրջանակներում 2016 հոկտեմբերի 12-14-ը կայացավ նաև հայ-ռուսական 2-րդ երիտասարդական «Ընդհանուր հայացք ապագային» խորագիրը կրող համաժողովը:

6. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

2016թ. ընթացքում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ստացվել, մշակվել և «Mulberry» համակարգի միջոցով գրանցվել է 16217 մտից փաստաթուղթ, ելից՝ 6117 գրություն:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել թվով 69 ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

7. ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾ

Հաշվետու տարում, ՀՀ արխիվային գործի զարգացման 2016թ. ծրագրին համապատասխան, գործունեություն է ծավալվել ներքոնշյալ հիմնական ուղղություններով.

1. Արխիվում պահպանվող արխիվային փաստաթղթերի ֆիզիկական վիճակի բարելավման և պահպանվածության ապահովման նպատակով, վերականգնվել-վերանորոգվել է 329.305 թերթ արխիվային փաստաթուղթ (ծրագիր 310 000), կարվել-կազմապատվել՝ 27.123 արխիվային գործ (ծրագիր 26 500),:

2. Համալրման աղբյուր և այլ կազմակերպություններից արխիվային պահպանության է ընդունվել 11.864 գործ, որից՝ մշտական պահպանության՝ 8.597, անձնակազմին վերաբերող՝ 3.267 գործ: Համալրվել է նաև անձնական ծագման՝ ցրոն վիճակում գտնվող 69.846 թերթ փաստաթուղթ և 8.015 պահպանման միավոր կինոֆոտոֆոնո փաստաթուղթ, այդ թվում՝ 79 կինո, 1.513 ֆոտո և 6.423 ֆոնո փաստաթուղթ:

3. Շարունակվել է արխիվային փաստաթղթերի թվայնացման գործընթացը: Թվայնացվել է 265.490 պատկեր (էջ) թղթե կրիչով փաստաթուղթ (ծրագիր՝ 266.140): Թվայնացվել է նաև 2.214 պ.մ. կինոֆոտոֆոնո փաստաթուղթ, որից՝ 411 կինո փաստաթուղթ (խաղարկային, ոչ խաղարկային ֆիլմեր և մուլտֆիլմեր), 1.793 ֆոտո փաստաթուղթ և 10 ֆոնո փաստաթուղթ:

4. 2016թ. ընթացքում պատասխանվել է քաղաքացիներից և կազմակերպություններից, այդ թվում՝ արտասահմանից, ստացված 33.804 հարցման, որը նախորդ տարվանից ավել է 2819-ով:

5. 2016թ. ընթացքում ՀԱԱ-ն ունեցել է 462 ուսումնասիրող:

6. Հաշվետու տարում նախապատրաստվել և հրապարակվել են փաստաթղթերի 6 հավաքածու, ավարտվել են 3 ժողովածուների պատրաստման աշխատանքները, տպագրվել է <<Բանբեր Հայաստանի արխիվների>> տարեգրքի 2016թ-ի համարը (124), եթեր են հեռարձակվել 55 ռադիոհեռուստահաղորդում:

7. Կազմակերպվել են փաստաթղթերի և նյութերի 3 ցուցադրություն.

- Էջմիածնի Մայր Աթոռում, <<Արդի հասարակության զարգացման հոգևոր-բարոյական կողմնորոշիչներ>> թեմայով տեղի ունեցած միջազգային կոնֆերանսի շրջանակներում՝ նույն անունով փաստաթղթերի ցուցահանդես,
- Հայաստանի Հանրապետության 25-ամյակին նվիրված ցուցահանդես,
- <<Օրիորդների կրթական գործը 19-րդ դարում>> թեմայով ցուցահանդես:

8. Հիմնավերանորոգման է ենթարկվել արխիվի վարչական շենքը (11 մլն. դրամ), փոխվել է գլխավոր մասնաշենքի և 1-ին արխիվապահոցի տանիքը (11,3 մլն. դրամ), 2-րդ արխիվապահոցի պատուհանները (2,6 մլն. դրամ): Ընթացիկ վերանորոգման են ենթարկվել արխիվի Արթիկի, Բերդի և Թալինի տարածքային ստորաբաժանումների տարածքները:

9. 2016թ. պետբյուջեից ֆինանսավորումը կազմել է 530,57 մլն. դրամ սուբսիդիա, մոտ 20 մլն. դրամ դրամաշնորհ: Ձեռնարկատիրական գործունեությունից հասույթը կազմել է ավելի քան 108 մլն. դրամ: